



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5835(2f)

23502 -

23504(3f)

5211 (7f)

8073-8075

(9f)

929

5-96



8074 (9p)

Բ Ա Ն Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Ի Մ Ա Հ

ՊԵՏՐՈՍ ԷՓԷՆՏԻ

Ե Ա Ղ Լ Ը Գ Ճ Ե Ա Ն

ԽՕՍԵՏԵԱԼ

Ի ՊԵՐԱ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ

ՅԵՎԵՂԵՑԻՈՋ Ա՝ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՆ

Յ 30 ՄԱՐՏԻ

Հ. Յ. Գ. *1875*



Վ Բ Է Ն Ն Ա

Ի Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն Ի

1875.

13554



482  
40 P

# Յ Ի Ղ Ա Տ Ա Կ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՍՐՏԻ ԵՒ ՄԵՆԱՐԱՆԱՑ

ԶՈՐ ՆՈՒԻՐԷ

ԱԿԱՆԱԻՈՐ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅՆ

ԵՒ

ՍԳԱԻՈՐ ԱԶԳԱՏՈՅՄԻՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱԿԱՆ





## ՊԱՏՈՒԱԿԱՆ ՏԵԱՐԲ

**Զ**ուր կը փնտրեն այսօր ձեր եւ մեր տըրտ-  
մութեամբ յողնած աչքերն ան մէկը՝ որն որ սակե-  
քիչ օր առաջ՝ հիմա հոս ներկայ դանտուղ շատ  
յարգոյ անձանց խումբի մը մէջ կը փայլէր, իբրեւ  
մեր Հասարակութեան առաջին կարգի ասպններէն  
մէկը, որն որ աւելի եւս հիմա կը փայլէ, ապահով-  
ըլանք, բայց մեզմէ վեր եւ շատ հեռու: Արդէն  
անոր ծանր դադաղին վրայ, իբրեւ հօր, իբրեւ  
եղբօր, քեռուոյ, աներոջ, հաւու եւ քեռառն, ջերմ  
արցունքներ ինկան: Պժուարին կորուստ, բայց  
միանգամայն հարկ եւ սահման անողոքելի, որն որ  
կնքեալ է եւ ետ չի դառնար: Ա՛լ հոս չէ Պեարոս  
Լ. Ֆէնտի Ապղըզճեան, զլուխ, արմատ եւ գրե-  
թէ նահապետ այսչափ ազնիւ զերդաստաններու:  
«Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր» կը մըմըն-

Չէր իր փառաւորութեան մէջ զլուսը թագ ունեցող Մարգարէն, «որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղիկ. շնչէ ի նմա հողմ», եւ ոչ է. եւ ոչ եւս երեւի տեղի նորա», : Այո՛, այսչափ եւ ցայս վայր, բայց անոնց համար՝ որոնք մինակ շնչաւոր կենօք կ'ապրին կ'անցնին. խոտ, եղէգ, ծաղիկ վայրի, հողմ, խորշակ, դաշտ ցամաքեալ ի հիւթոյ, տեղի աներեւոյթ հեռակորոյս: Այսպէս սա կապոյտ վարագուրէն անդին, ուր մեր Յուզարկելոյն կեանքը ծածկուած է յԱստուած Քրիստոսին, որուն հետ, ինչպէս կրնանք վստահիլ, արդէն կը թագաւորէ:

Ինկաւ, ինկաւ մեծ հնձողին առջեւ հասկ մ'ալ՝ արդէն, ինչպէս ամաց, նաեւ արդեանց լիութեամբ զլուսը խոնարհեցուցած: Անոր կենաց ընթացքը չեն ըներ նշանաւոր թնդիւն եւ դըրրդիւն կամ հոչակ հանող գործառնութիւնք, քաղաքաց եւ դաւառաց բնակիչք անոր տեսչութեան օրերը չեն պատմեր, խորհրդարանաց կամ դահլիճներու մէջ իր ճառերը չհնչեցին, դեսպանութեամբք կամ քաղաքական խնդրոց կնճիռներ լուծելով անուանի չեղաւ, եւ ոչ մատենագիտաց մէջ համբաւաւոր: Եսանիներ չեն լեցըներ 78 տարիները: Աւրիշ էր ասոր ընտրած աստիճանը, ուրիշ իր մեծութիւնը: Մեծ է եւ շատ մեծ՝ ով որ Աստիճանաճութեանն իրեն անգամ մը ցուցուած զրից կամ պաշտօնին մէջ, ճարտար եւ անստերիւր իր դերը կը կատարէ: Չէր առած բնութիւնն իրեն՝ իշխողական կամ հրամայողական բերում մը, բայց օժտած էր զանկա, ասոր փոխարէն, ազնուական ծանրութեամբ

մը՝ զուգեալ խոնարհամտութեան մը հետ, որն որ երբեք զինքը չթողուց. պատահարաց եւ ժամանակաց յեղափոխ տատանման մէջ միօրինակ զգուշաորութիւն մը պատահելով՝ հաւասարապէս յանդրդնութենէ եւ վհատութենէ հեռու: Եսանկ գտան զանհիկայ իւր մերձաւորք եւ բազմաթիւ բարեկամք իր գործքերուն, խօսքերուն եւ մտածութիւններուն մէջ: Տանուվեց տարւան պատանին կը մտնէ իւր տէրութեան ծառայութեան մէջ, քիչ տարի ետքը հզօր պաշտօնատարի մը հրամանին տակ, անոր աչքին բիրն եւ աջ բազուկը կըլայ. իր հաւատարմութիւնն, արդէն ան ատեն համբաւաւոր եղած, ՅՅ տարւան շարունակեալ գործողութեան մէջ չերեցըներ արատ մը: Ո՛րչափ դուզնազիւտ օրինակ՝ աս մեր խանդարուած ժամանակը յանդիմանելու:

Իայց թողունք իր քաղաքական եւ ընկերական առաքինութիւններն ու բարեմասնութիւնքը, որպէս զի անոնց արմատը դիտենք: Այո՛, ասոնք իր վրայ իբրեւ թարմասար զարդ եկած կեցած ծագիկներ չէին, որոնք չեն տեւեր, ուշ շուտ կրից ջերմութեան առջեւ չեն դիմանար կը խամրին, ինչպէս հազարաւորաց վրայ փորձը կը ցուցընէ, նոյն իսկ շատ խոհեմ եւ բարեմոյն բնաւորութեանց վրայ: Չէ, ան բարեմասնութիւնք իր վրայ արմատէ մը յառաջ կու գային եւ անոր տուած հիւթովը կ'ապրէին:

Նոս է բուն իրաց խորութիւնը: Եսոր բնականապէս չէին կրնար ո՞ր եւ իցէ աչքեր թափան-

ցել՝ հետազօտելով երկնաւոր շնորհաց զազանի  
հրաւերները, որոնցմով ամենուն եւ իւրաքանչիւ-  
րոյ կոչումներ եւ ասոնց համեմատ միջոցներ  
քաղցրութեամբ կը մատակարարուին, որպէս զի  
ան գերբնական ընկերութիւնը՝ որուն կանչուած  
ենք, Վրիստօսի Տեառն մերոյ եւ Գլխոյն խոր-  
հրդական մարմինը, ամէն յօդուածովք եւ ան-  
դամօք կատարեալ ըլլայ: Այսպէս չէ թէ մինակ  
այլեւայլ դասաւորութիւններ կը կազմէ վերին  
մատակարարութիւնը, հապա անոնց ամենուն մէջ  
նոյն իսկ խոնարհագոյն եւ ստորին կարգերուն մէջ,  
նշանաւոր օրինակներ կը փայլեցընէ: Մինակ անա-  
պատաներու մէջ չեն, մինակ խրճիթներու մէջ փա-  
կուած կամ թաղեայ խոշոր զգեսաներով ծած-  
կուած չեն Աստուծոյ հաւատարիմ ծառաները:  
Տեսա՞ր, կըսէր Աստուած պարծելով՝ բոլոր աշ-  
խարհք պտըտած եկած Սատանային, տեսա՞ր  
ղՅօր, «Արեւելեաց ամենէն ազնուականը», այր  
անարատ, ճշմարիտ, աստուածապաշտ, մեկնեալ  
յամենայն իրաց չարաց: Շատ ազէկ կրնայ աս-  
տուածային զօրութիւնն իր սքանչելիքը գործել  
նաեւ պալատներու եւ դանձերու մէջ, կրնայ քրիս-  
տոնեայն մինչեւ մէկ աստիճան մը, երկիրս փայտել՝  
ատանց երկինք կորսընցընելու, այս ինքն երկրա-  
որօքս վարիլ՝ ցորչափ արգելք չեն անոնք՝ եր-  
կնաւորներն ալ ստանալու:

Ահաւասիկ մեր ազնիւ Հանգուցելոյն կենաց  
զլիաւոր նկարագիրը. քալել պատուիրանաց ճամ-  
բան, բովանդակ երկայնութեամբ, ի մանկութենէ,

մինչեւ ի պատկառելի ծերութիւն, անընդհատ եւ անսայթաք: Չէ թէ մինակ որոշիչ վայրկեաններու մէջ՝ ոչինչ բարիք Աստուծոյ ծառայութեան նախադաս ընել, ոչինչ չարեաց երկիւղիւ անկէ ետ կենալ, հապա ո՞ր եւ իցէ ատեն աս իրեն տրուած ժամանակեայ պարգեւներուն սիրտ չկապել, չտալ անոնց իրենց արժէքէն աւելի յարգ, չէ թէ վայելել զանոնք, հապա գործածել, գործնական ճանաչում մը մեր բոլորաիբր պատող ընդունայնութեանց չափուն, համառօտ ըսելով՝ ճշմարիտ քրիստոնէական խնաստութիւն: Ասիկայ արդէն զաշխարհ չսիրել է, է յաղթել աշխարհի, իշխելով անոր՝ չէ թէ ծառայելով, կոտրելով ան խայթոցը՝ որով աչաց եւ մարմնոյ բռնաւորութիւնը՝ փառասէր ամբարտաւանութեամբ մէկտեղ կը զօրանայ վնասելու:

Յայտնի է՝ որ ասանկ մէկը չէր կրնար իր դուժը գոցել ընկերին առջեւ, երբ որ կարօտութեան կամ վտանգի մէջ տեսնէր: Գուժն իրեն երբեմն քաջասրտութիւն տուած է դժուարին ժամանակներու մէջ՝ նաեւ կախաղանէ կեանք ազատելու: Ամէն կարգէ մարդիկ կրնան իր տրոցը համար վիայել, բայց բոլորը՝ մինակ Այն կրնայ դիտնալ՝ որն որ ըսած է թէ Ողորմելու ատեն չգիտնայ աջ ձեռքդ ինչ որ ձախդ կ'ընէ: Իրեն սովորական էր առանց ազմկոյ, առանց փողեր հնչել տալու՝ որրոց հայր ըլլալ, այրեաց արցունքը սրբել, ծերոց ծանր օրերը թեթեւցընել: Բոլորը հիմա մթերուած հոն դտած է, ուր ցեց եւ ուտիճ չէն ապաւ կաներ եւ ոչ գողեր կրնան սկան հատանել:

Ասիկայ ստուգիւ քրիստոնեայ անուն կրելու արժանաւոր ողջոյ մը վարած կեանքին խոշոր մէկ ծրագրութիւնն է, որն որ քրիստոնէական լեզուաւ խօսելով, Հաւատոյ, Յուսոյ եւ Սիրոյ կեանք մըն է՝ խորհուրդներով ծնած, պահուած եւ զարգացած: Ասոնք Աստուծոյ պարգեւներն են, եւ երբ որ զասոնք մեր Յուղարկելոյն վրայ կը դիտենք, չե կրնար ուրիշ նպատակաւ մ'ըլլալ, բայց եթէ որ ձրի պարգեւներուն սուտըր փառաւորուի: «Օջի է մարդ, զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ, զի այց արասցես դու նմա»,: Սակայն շատ անգամ մարդուս մի միայն գործքն է՝ որ աստուածային բարութեան հոսանքը կամ կը գոցէ եւ կամ բոլորովին կը բանայ: Մեր Հանգուցելոյն երկրաւոր եւ երկնաւոր մեծութեան բուն սկիզբ եւ աղբիւր, չենք տարակուսիր ըսելու, իրեն մէկ արիական հաւատոյ խոստովանութիւնն է: Այսպէս է, Պատուական Տեարք, պէտք չենք ասոր երկրայիլ: Մահկանացուացս կեանքին մէջ շատ անգամ մի միայն գործողութիւն մըն է՝ որն որ Աստուծոյ սիրան այնչափ կը յափշտակէ՝ որ անկէ ետքը կը ձայնէ իրեն. «Փոխանակ զի արարեր զբանդ զայդ, եւ ոչ ինայեցեր յորդիպ քո սիրելի վասն իմ, օրհնելով օրհնեցից զքեզ եւ բազմացուցանելով բազմացուցից . . . տաց զերկիրդ զայդ առաջի քո, քեզ եւ զաւակի քում»,: Այսպէս երբեմն Ուր քաղքին, նոյնպէս գրեթէ ձեր նահապետին ալ:

Արուն ծանօթ չեն ասկէ 47 տարի առաջ մեր հասարակութեան իր հաւատոյն համար կրած փոր-

ձերը: Պետրոս նոյն իսկ առիւծուն առջեւն էր ան նեղութեանց օրերը. տարագրութեան ցուցակներուն մէջ իր անունը կը մտնէր կ'ելլէր. ողորանք, սպառնալիք, ան հզօր մարդուն պատուէրներն ու սաստերը չկրցան աս երիտասարդը կակղել, գոնէ այսչափ՝ որ օտար հաղորդութեան մը աղօթատեղին կոխէ, այս ինքն անգամ մը տկարանայ, անգամ մ'ուրանայ մարդկան առջեւ ան՝ զորն որ Աստուծոյ առջեւ կը հաւատայ: Բոլորովին որոշ էր աս ամէն պահանջմանց կամ հրաւիրանաց դէմ իր պատասխանը՝ թէ պատրաստ է աս խոստովանութեան եւ կաթուղիկեայ անուան համար իյնալ պաշտօնէ, ստրկէ, վաստակէ. օտար երկիր, բանտ, զան, ամենայն ինչ կրել, նաեւ սուր՝ որն որ վերջապէս իրեն սպառնացաւ: Պեռ առոյգ երիտասարդ մը, աշխարհք դեռ իր աչքին ծաղիկներով լեցուն, երկայն ապագայ մը իրեն կը ժպտի յուսով. սակայն ինք ան աստիճանի արիութեամբ աս ամէն բան կ'արհամարհէ՝ զօրացած դէմքին վրայ առած Քրիստոսի դրոշմով, որ ան ահուգողի ատենները կը շարունակէ անխռով նաեւ իր բարեպաշտութեան սովորութիւնները, երկու երեք շաբաթ մէյ մը սրբազան խորհրդոց մօտենալով այս եւ սոյն թաղիս մէջ՝ ուր հիմա կը կենանք: Այեցէք, կըսէր ան ատենուան Առաքելական Տեղապահը՝ զանիկայ ցուցնելով այնչափ թուլացելոց եւ ահարեկելոց, նայեցէք սա պատանուոյն, սիրտ առէք, մի վախնաք աս համբուած օրերէն:

Անցան իրօք սոյն օրերը, եւ յաջորդեցին տա-

րիներ՝ որոնց մէջ աս պատանւոյն երբեք պակաս չըրաւ Աստուած իր պաշտպանութիւնը, շնորհելով բաւական երկայն կեանք անանկ պարգեւներու լիութեամբ, որոնցմէ ինք աչք առած էր Անոր սիրոյն համար զրկուիլ: Հիմա իրեն արձուատոհմ ժառանգաւորաց թողուցած բաներուն մէջ չեն շողար այնչափ՝ արծաթ, ոսկի, գոհարք, սպարանք, որչափ ան օրհնութիւնն՝ որն որ զասոնք ալ իրբեւ յաւելուած ընդունեցաւ: ‘Նոյնը, Պատուական Տեսարք, կը շարունակէ անշուշտ իրեններուն վրայ, եթէ Աստուծոյ Հօր պատուէրներն եւ Ակեղեցոյ Մօր հրամանները նոյն երկիւղածութեամբ պահուին, վասն զի ան ասեն, ինչպէս արքունական Մարդարէն վերը յիշուած խօսքերը շարունակելով կըսէ, “Ողորմութիւն Տեսան յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց եւ արդարութիւն նորա յորդոց մինչեւ յորվիս, ոչք պահեն զուխաս նորա, յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա”,:

Սեր հանդուցելոյն զասնալով՝ կըսենք թէ ինչք եւ սասցուածք իրեն հոս տրուած հատուցման փոքրագոյն մասն էր. իրեն ուրիշ կարգի, բարձրագոյն կարգի բարիք մը սահմանած եւ տուած էր Տէր, հրեշտակ մը աս պանդխտութեան մէջ, այս ինքն կենաց ընկեր մը, ստուգիւ. “օգնական նման նմա”, այնպիսի՝ որպիսի Հողին Սուրբ նկարած է, “մեծագին քարերէն աւելի յարգի, իր երկանը դործակից եւ կենակից՝ բարի չէ թէ չար բաներու, շահարեր նաւի մը պէս. բոլոր զիշեր չի



մարիւր անոր ճրագն ասջեւէն, որն որ իր ձեռքն՝ աղքատաց ընդարձակեց եւ տնանկին պտուղ երկրնցուց. պարկեշտ էին անոր ճամբաները, սուտ հաճութիւնք եւ ընդունայն գեղեցկութիւն վրան չկար\* : Ստուգիւ մեր խանդարեալ ժամանակներուն համար՝ կատարեալ ամուսնական ներդաշնակութեան օրինակ մ՞ըլլալու չափ նշանաւոր միաւորութեանց մէկն էր ասոնցը :

Աս սուրբ ընկերութեան բնական կարգի պտուղները վայելելու բաւական տարիներ ունեցան, որոնք իրենց համար յայնմ չէին կայանար՝ որ անցաւոր իրաց ծարաւ մը բորբոքէին եւ երկրաւոր հաճոյից արբեցութեամբ իրար լեցրնէին, ինչպէս շատ անգամ կ'ըլլայ, նաեւ սրափ խտորում բերելով . հասպա արդէն մարդուս կեանքն ելեւէջի մը մէջ գտնուելով անդադար, յաջողութեան ու չաջողութեան, ուրախութեան եւ տրամուլթեան, աս բարեկարգ զուգաւորութեան մէջ թեթեւ կ'ըլլար հարկաւ հոգն ու տխրութիւնը՝ երբ որ երկու սիրտերու կը բաժնուէր, եւ պարզ հաճութիւն մը կը սաստկանար, կ'ըլլար բազմապատիկ, երբ որ ցոլանալով մէկէն մէկային կը դառնար : Յայտնի է որ մեր Հանգուցեալք իրենց բարեպաշտութեամբն ասկէ շատ աւելի ազնուագոյն վախճաններ դիտած կամ զգացած են՝ աս միաւորութիւնն իր ճշմարիտ մեծութեան մէջ ըմբռնելով, իբրեւ խորհուրդ մը «ի Քրիստոս եւ յԵկեղեցի», այս ինքն չէ թէ մինակ աս երկուքին հրաշալի միաւորութեան պար-

\* Առակաց ԼԱ :

զապէս օրինակ մը, հապա Քրիստոսի փառացն իրական ծառայութիւն մը, որուն արդիւնքն հարկաւ կը սպասէ՝ որ հետ զհետէ փրկելոց թիւն աճեցընէ, հինէն՝ նոր մարդոյն զաւակ ընդունելով :

Ասկէ գրեթէ երկու տարի առաջ\*, այսպէս Աստուծոյ կամքն ըլլալով, խզեցաւ աս միաւորութիւնը, կարծես թէ ամբողջի մը մնաց հոս մէկ կէտը՝ մէկալ կէսն երթալով : Երօք իբրեւ արդէն կանչուած կապրէր անկէ ետքը մեր Յուզարիեայը, բովանդակ երկամեայ ժամանակը մահուան պատրաստութիւն մըն էր. կրկին կը քննէր իր Փրկչին հետ ունեցած հաշիւները՝ միշտ անոր ողորմութեան ապաւինած, սակայ Ապաշխարութեան խորհրդոյն աւագանը դիմելով : Իր յատուկ խօսքն է՝ որ աս միջոցին կը կրկնէր. «Պատրաստ գտնուիմ սուրբ մահուան», : Պարծես թէ ասոր ոտնաձայնն առած՝ աճապարեց, ինքնաշարժ, իր մեծ ճամբորդութեան պաշարն առնելու, զՀացն հրեշտակաց՝ որոնց գաւառէն ան շատ հեռու չէր, շնորհակալ ըլլալով Աստուծոյ՝ որ աս ալ լմնցուց :

Ամոցս 17ին առտուան դէմ ան մահականացուաց մէջ չէր Պետրոս Ափէնտի Ազգերգճեան : Իր Երարչին ձեռքը յանձնուած է աս ազնուական հողին, կրնանք յուսալ որ արդէն վայելէ հոն՝ ուր ամէն հեծութիւն լռած եւ բոլոր արտասուք ցումքած են, եւ մեզի նայի հիմա ան վերին խորաններէն՝ ոչ առանց օգտի, հոն ալ հոգալով մեր խաղաղութիւնը՝ զորն որ կորսընցուցած ենք, ինչպէս

\* 12 Յունուարի, 1873 :

պիտէ, որուն համար հոս չէր կրնար բաւական  
ողբալ, չէր կրնար բաւական ցաւիլ՝ ցաւով մը,  
որ լն էր հեղութեամբ, անխառն որ եւ իցէ զայրոյ-  
թէ, որ եւ իցէ կուսակցութեան հողիէ, ինչպէս  
որ ճշմարտապէս Աստուծոյ զատը պաշտպանողնե-  
րուն կը վայլէ:

Բայց եթէ դեռ փոքր մի ժամանակ կ'արգե-  
լու աստուածային արդարութիւնն մեր հանգուցե-  
լոյն առջեւ երանաւէտ կենաց ուղիները, ահա գտան  
զինքն հիմա աս եւ ուրիշ սրբազան սեղաններուն  
վրայ մատուցուած զենմունք եւ պաղատանք՝ որոնք  
ահա խնկոց հետ պիտ'որ վերանան հիմա յանուն  
Եկեղեցւոյ: Ասոնք են՝ որ ասկէ ետքն ալ մեր հա-  
ղորդութիւնն իրեն հետ յարատեւ պիտ'որ ընեն:

Հանգիստ յաւիտենական շնորհէ իրեն Տէր .  
լոյս մշտնջենաւոր ծագի անոր, եւ հանգչի ի խա-  
ղաղութեան. ամէն:







